# «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել 5.1-ին մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Վարչապետի որոշումները ստորագրում է վարչապետը: Վարչապետի որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է վարչապետի կողմից ընդունված տարբերակը:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել 4.1-ին մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Փոխվարչապետի որոշումները, ինչպես նաև դրանց հավելվածները ստորագրում է փոխվարչապետը:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Կառավարության նիստերը դռնբաց են: Վարչապետի որոշմամբ նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կարող է անցկացվել դռնփակ:»,

2) 16-րդ մասի երկրորդ նախադասությունում «մասը» բառից հետո լրացնել «(վարչապետի որոշմամբ նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը դռնփակ անցկացված լինելու դեպքում)» բառերով,

3) 18-րդ մասում «մասին» բառից հետո լրացնել «, եթե տվյալ նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը վարչապետի որոշմամբ անց է կացվել դռնփակ» բառերով:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Կառավարության որոշման հավելվածը ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը հանդիսանում է Կառավարության նիստում ընդունված տարբերակը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը

Գործող կարգավորումների պահանջներին համապատասխան՝ ինչպես Կառավարության և վարչապետի որոշումները, այնպես էլ դրանց հավելվածները ներկայումս ստորագրվում են վարչապետի կողմից:

Առաջարկվող լուծումները

Հատկանշական է այն հանգամանքը, որ որոշումների՝ հատկապես

Կառավարության, ընդունմանը նախորդում է դրանց քննարկման մի քանի փուլ (այն է՝ նախանիստ, նախարարական կոմիտե, Կառավարության նիստ) և այդ փուլերից յուրաքանչյուրում վարչապետին զեկուցվում է այդ որոշումների բովանդակությունը և քննարկման արդյունքները: Ավելին՝ Կառավարության նիստի օրակարգի ձևավորման փուլում ևս որոշումներն ամբողջությամբ և հանգամանալից զեկուցվում են վարչապետին, իսկ Կառավարության նիստում տեղի ունեցող քննարկումն իր հերթին ևս մեկ փուլ է՝ տվյալ որոշման բովանդակությանը ծանոթանալու և դրա արդյունքում որոշման ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելու համար: Թեև վարչապետի որոշումները, որպես կանոն, չեն քննարկվում վերը հիշատակված հաջորդայնությամբ, այդուհանդերձ, դրանք նույնպես դեռևս նախագծային փուլում պարբերաբար զեկուցվում են վարչապետին:

Հետևաբար, Կառավարության նիստում որոշումներն ընդունվելուց հետո՝ դրանց հավելվածների ստորագրումն ըստ էության կրում է սիմվոլիկ բնույթ: Այդ առումով՝ մշակված օրինագծով առաջարկվում է վարչապետի ստորագրմանը ներկայացնել միայն իրավական ակտ հանդիսացող որոշումը, իսկ օրենքի իմաստով որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը ստորագրելու իրավասությունը վերապահել վարչապետի աշխատակազմի ղեկավարին (ի հաստատումն այն հանգամանքի, որ տվյալ հավելվածը հանդիսանում է Կառավարության կամ վարչապետի կողմից ընդունված տարբերակը)՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տվյալ փուլում ևս վարչապետին ներկայացվում է ամբողջ որոշման, այդ թվում՝ հավելվածների կարգավորման առարկան և բովանդակությունը:

Միաժամանակ, տարընթերցումներից խուսափելու նպատակով, առանձին դրույթով շեշտվում է, որ փոխվարչապետի որոշումների հավելվածները ստորագրվում են հենց փոխվարչապետի կողմից:

Վերոգրյալից զատ՝ Կառավարության գործունեության հրապարակայնությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ի տարբերություն գործող կարգավորումների, օրինագծով սահմանվում է, որ Կառավարության նիստերը դռնբաց են՝ զուգահեռաբար ամրագրելով, որ վարչապետի որոշմամբ նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կարող է անցկացվել դռնփակ: Ըստ այդմ՝ համարժեքորեն վերանայվում են նաև այս կարգավորումից ածանցվող մյուս դրույթները:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման պարագայում՝ Կառավարության նիստերն այլևս, որպես կանոն, կանցկացվեն դռնբաց, իսկ Կառավարության և վարչապետի որոշումների հավելվածները ստորագրելու իրավազորությամբ կօժտվի վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ինչն իր հերթին էապես կբարելավի Կառավարության և վարչապետի որոշումների ընդունմանը հաջորդող գործընթացների հնարավորինս արագ և արդյունավետ կազմակերպումը: